ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

N 10/16.2/8697-15
18.07.2015թ

0078 Երևան, Հալաբյան 41 ՠ, հեռ. 380250
Էլ. փոստ armen.gevorgyan@justice.am

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ
ՀԱՍՑԵ՝ ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ, ԲՈՒԶԱՆԴԻ Փ 1/3,4-ՐԴ ՀԱՐԿ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր 2015թ. հուլիսի 9-ի ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված 252-ի 7 թվակիր գրության՝ հայտնում եմ, դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության «Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին (այսուհետ՝ գրասենյակ) Համաշխարհային Բանկի կողմից տրամադրվել է՝ «Ճապոնական դրամաշնորհ՝ TF 057514 2007-2013թթ. 3,000,000 ԱՄՆ դոլար»:

Գրասենյակն այժմ Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացնում է «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի վերապատրաստման կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր (TF013656, 2014-2016թթ., 468,000 ԱՄՆ դոլար):

ՀՀ արդարադատության նախարարության «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ԱՄՆ Պետքարտուղարության Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բաժնից տրամադրված դրամաշնորհի շրջանակներում «Փի-Էյչ Ինթերնեյշնլ» կազմակերպության հայկական մասնաճյուղի կողմից ստացել է դրամաշնորհներ՝ 2014թ. հունվար-մայիս ամիսներին 377500 ՀՀ դրամ «Հավասար հնարավորություն բոլոր երեխաներին» ծրագրի և 2014թ. դեկտեմբեր 2015թ. մայիս ամիսներին 1 956 000 ՀՀ դրամ «Աբովյան քրեակատարողական հիմնարկի կանանց շրջանում ծնողական ակումբի ստեղծում» ծրագրի իրականացման նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Ա. Գալստյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի կազմակերպական-իրավական
վարչությունհեռ.՝ 31-91-17